6.6 Ապրանքի յուրաքանչյուր խմբաքանակի մատակարարման հանձնման-ընդունման արձանագրության հետ մեկտեղ Վաճառողը Գնորդին է տրամադրում նաև տվյալ խմբաքանակի ապրանքների ծագման երկրի սերտիֆիկատը²⁷:

7. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՍՎՈՒԹՅՈՒՆԸ

7.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած Ապրանքի որակի և Պայմանագրով նախատեսված՝ մատակարարման ժամկետների պահպանման համար:

7.2 Վաճառողի կողմից Պայմանագրով նախատեսված Ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված Ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

7.3 Պայմանագրի 7.2 և 7.4 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

7.4 Պայմանագրի 1.1 կետում նշված Տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ Պայմանագրի ընդհանուր գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով²⁸:

7.5 Գնորդի կողմից Պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

7.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

7.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

8. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ /ՖՈՐՄ-ՄԱԺՈՐ/

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

9. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

9.1 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև Պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի

²⁷ Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե չի մատակարարվում Եվրասիական տնտեսական միություն անդամ երկրների արտադրության ապրանք:

²⁸ Պայմանագիրն օրենքի 14-րդ հոդվածի 7-րդ կետի հիման վրա կնքված լինելու դեպքում տուգանքը հաշվարկվում է պայմանագրի գնի այն մասի նկատմամբ, որի համար տվյալ տարվա ընթացքում կհատկացվեն ֆինանսական միջոցներ և կկնքվի համաձայնագիր:

համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը իրավունք ունի միակողմանիորեն լուծելու Պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև Պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային Պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում Պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման Պայմանագրի կատարմամբ Գնորդի ստացածով:

9.2 Սույն պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ դեռևս նախատեսված չեն : Համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կկնքվի լրացուցիչ համաձայնագիր: Սույն պայմանագրի կնքմանը հաջորդող տարում ֆինանսական միջոցներ չնախատեսվելու դեպքում պայմանագիրը համարվում է լուծված:

Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կնքման պահից, սակայն գործում է համապատասխան ֆինանսական միջոցների նախատեսման դեպքում լրացուցիչ համաձայնագրի կնքման պահից սկսած մինչև կողմերի պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

9.3 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

9.4 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա Պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է Պայմանագրում, իսկ եթե Պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ Պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող Ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող Ապրանքի միավորի գնի կամ Պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ Պայմանագրի փոփոխման դեպքերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

9.5 Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև ապրանքի ամբողջ ծավալով մատակարարման ժամկետի ավարտն ընկած ժամանակահատվածի յուրաքանչյուր վեցերորդ ամիսը լրանալը Գնորդը «Գնումների մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 7-րդ կետի հիման վրա սահմանված կարգով շրջանակային համաձայնագրերով կազմակերպում է տվյալ ապրանքի ձեռքբերման նոր ընթացակարգ: Եթե այդ ընթացակարգի արդյունքում սահմանված կարգով ձևավորված նվազագույն միավոր գինը որևէ ապրանքի մասով ցածր է Պայմանագրով սահմանված գնից, ապա այդ մասով Գնորդը մեկ աշխատանքային օրվա ընթացքում Վաճառողին ներկայացնում է ապրանքը ձևավորված ցածր գնով մատակարարելու պահանջ և Պայմանագրում փոփոխություն կատարելու վերաբերյալ համաձայնագրի նախագիծը: Եթե Վաճառողը երկու աշխատանքային օրվա ընթացքում չի ստորագրում և Գնորդին ներկայացնում Պայմանագրում փոփոխություն կատարելու վերաբերյալ համաձայնագիրը, ապա այդ մասով Գնորդը ընտրված մասնակցի հետ կնքում է նոր պայմանագիր և դրա ուժի մեջ մտնելու ամսաթվին համապատասխան այդ մասով միակողմանիորեն լուծում է Պայմանագիրը՝ առանց Վաճառողի նկատմամբ Պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցների կիրառման:

9.6 Եթե Պայմանագիրն իրականացվում է գործակալության պայմանագիր կնքելու միջոցով.

1) Վաճառողը պատասխանատվություն է կրում գործակալի պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար.

2) Պայմանագրի կատարման ընթացքում գործակալի փոփոխման դեպքում Վաճառողը գրավոր տեղեկացնում է Գնորդին՝ տրամադրելով գործակալության պայմանագրի պատճենը և դրա կողմ հանդիսացող անձի տվյալները՝ փոփոխությունը կատարվելու օրվանից հաշված հինգ աշխատանքային օրվա ընթացքում²⁹:

9.7 Եթե Պայմանագիրն իրականացվում է համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով, ապա մասնակիցները կրում են համատեղ և համապարտ պատասխանատվություն: Ընդ որում, կոնսորցիումի անդամի կոնսորցիումից դուրս գալու դեպքում կոնսորցիումի հետ Պատվիրատուի

²⁹ Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի իրականացվում գործակալության պայմանագիր կնքելու միջոցով:

կնքած պայմանագիրը միակողմանիորեն լուծվում է և կոնսորցիումի անդամների նկատմամբ կիրառվում են Պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցները³⁰:

9.8 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև Պայմանագրով այդ ժամկետը լրանալը Պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ՝ Գնորդի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով:

9.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ Պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են Պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել Պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

9.10 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը, «Ինտերնետով հրապարակային և անհատական ծանուցման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն, ուղարկում է Վաճառողի պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեով և միաժամանակ նույն օրը հրապարակում է www.gnumner.am հասցեով ինտերնետային կայքում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետում նշված կայքում հրապարակվելուն հաջորդող օրվանից:

9.11 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, Պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

9.12 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

9.13 Պայմանագիրը կազմված է _____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3, N 4 և N 4.1 հավելվածները, համարվում են Պայմանագրի անբաժանելի մասը:

9.14 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ

ՎԱՃԱՌՈՂ

/ստորագրություն/
Կ.Տ

/ստորագրություն/
Կ.Տ

Անհրաժեշտության դեպքում պայմանագրում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:

³⁰ Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի իրականացվում համառոտ գործու նեոլոգիան (կոնսորցիոն մի) պայմանագիր կնքելու միջոցով:

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ , ԼՎԱՅՔԱՆՅՈՒԹԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ*

N	Ապրանքի	Չափման միավոր	Քանակ
	Անվանում		
1.	<p style="text-align: center;">Լվացքի Փոշի Ավտոմատ</p> <p>Բաղադրությունը՝ մինչև 5% պոլիկարբոսիլներ պարունակող կատրինային արտաքին ակտիվ նյութերից /ԱԱՆ/ 5-15% թթվածին պարունակող սպիտակեցնող նյութերից, 15-30% անիոնային ԱԱՆ, ֆոսֆատներ, էնզիմներ, օպտիկական սպիտակեցնող նյութերից: Հոտը ըստ կիրառված հոտավորիչի</p> <p style="text-align: center;">3կգ-5կգ –ng տուփերով</p>	կգ	750
2.	<p style="text-align: center;">Լվացքի Փոշի Ոչ Ավտոմատ</p> <p>Սպիտակ կամ բաց դեղնավուն կամ գունավորված հատիկավոր փոշի, փոշու զանգվածային մասը ոչ ավել 5%рН-ը 7.5-11.5, ֆոսֆորաթթվական աղերի զանգվածային մասը ոչ ավելի 22% փրփրագոյացման ունակությունը / ցածրփրփրագոյացնող միջոցների համար / ոչ ավելի 200մմ, փրփուրի կայունությունը ոչ ավելի 0.3միավոր, լվացող ունակությունը ոչ պակաս 85 %, ԳՕՍՍ 25644-96: անվտանգությունը, մակնշումը և փաթեթավորումը՝ ըստ ՀՀ կառավարության 2004թ. դեկտեմբերի 16- N1795-Ն որոշմամբ հաստատված «Մակերևութակալի միջոցների և մակերևութակալի նյութեր պարունակող լվացող և մաքրող միջոցների տեխնիկական կանոնակարգի», համաձայն 450 գ-ng տուփերով</p>	հատ	2100
3.	Ժավել ACC ավտոմատ կամ համարժեք 1լ-ng ործարանային տարաներով	հատ	750
4.	Ժավելի սպիրտ Սպիրտ, 120% 1լ-ng Գործարանային տարաներով	հատ	4000
5.	Լողակ Փոշի փաթեթ 5 0 գ-ng	հատ	100
6.	Լուգա Պլաստիկ խտանյութ 0.5-ng տարա	հատ	200
7.	Աման լվանալու հեղուկ Frosh, Fairy Կամ համարժեք 0.5լ	հատ	300
8.	Անձեռոցիկ Բամբակյա Միկրոֆիբրա, որակյալ 35/ 45 սմ	հատ	1500
9.	Աղբարկղ Կափարիչով Պլաստմասսայից, 10 խոր դմ տարողությամբ	հատ	100
10.	Ավել Սենյակի հատակը մաքրելու համար, բնական, տեղական արտադրության, քաշը չոր վիճակում (350-500)գրամ, երկարությունը (85-90) սմ, ավլող մասի լայնքը(35-40)սմ	հատ	200
11.	<p style="text-align: center;">Ավել աղբթափիչ Պոչը մետաղյա Թափիչը պլաստմասսայե</p> <p>Աղբը հավաքելու համար, ձողով ավելով ՀՍՍ 124-2007 կամ համարժեք, Տարողունակ գոգաթիակ, 32x39 սմ. + ավել 124 սմ</p>	Հա տ	80
12.	Բաժակ միանվագ օգտագործման հաստությունը 0.9 մմ որակյալ	հատ	3000
13.	<p style="text-align: center;">Գուպկա Աման լվանալու</p> <p>Ուղղանկյունաձև, երկարությունը 120 մմ, լայնությունը 70մմ, հաստությունը 25մմ, մի կողմից երեսպատված արհեստական կտորով</p>	հատ	150
14.	Դուլլ պլաստմասսայից կափարիչով 5լ տարողության, ՀՍՍ-124-2007, անվտանգությունը, մակնշումը և փաթեթավորումը ըստ ՀՀ կառավարության 2005թ. 25/05 N679-Ն որոշմամբ հաստատված սննդամթերքի հետ շփվող պոլիմերային և դրանց հիմքով պլաստմասսայե արտադրանքների տեխ. Կանոնակարգին.	հատ	25
15.	Դուլլ պլաստմասսայից կափարիչով 10լ տարողության, ՀՍՍ-124-2007, անվտանգությունը, մակնշումը և փաթեթավորումը ըստ ՀՀ կառավարության 2005թ. 25/05 N679-Ն որոշմամբ հաստատված սննդամթերքի հետ շփվող պոլիմերային և դրանց հիմքով պլաստմասսայե արտադրանքների տեխ. Կանոնակարգին.	հատ	30
16.	Դուլլ. Ոչ սննդային պլաստ. Կափարիչով 10լ	հատ	35
17.	Դուլլ. Ոչ սննդային պլաստ. կափարիչով 7լ	հատ	35
18.	Դուլլ. Ոչ սննդային Պլաստ. կափարիչով 5լ	հատ	35
19.	Զուգարանի Թուղթ Ռուլոնով, երկշերտ կամ եռաշերտ, 9.8x12.5սմ, 150 թերթիկ, երկարությունը 18.75 մ, պատրաստված գրելու թղթից, լրագրաթղթից և այլ թղթերի թափոններից, թույլատրված սանհիգիենիկ նշանակության ապրանքներ պատրաստելու համար: Համաձայն ՀՀ կառավարության 2006թ. 19/10 N1546-Ն որոշման կանոնակարգի	հատ	3000
20.	Թեյնիկ էլեկտրական Մեկ տարվա երաշխիք 1.5լ	հատ	30

21.	Թաս պլաստմասայից Ոչ սննդային 10լ	հատ	40
22.	Թաս պլաստմասայից Ոչ սննդային 5լ	հատ	20
23.	Թաս պլաստմասայից Ոչ սննդային 8լ	հատ	25
24.	Խոզանակ Երկարացվող Պոչով, հատակի Քամիչով գուպկայով Մաքրող մասի լայնությունը 50-60 սմ	հատ	40
25.	Խոզանակ Զուգարանի Տակդիրով, նիկելապատ	հատ	70
26.	Կրուշկա Պլաստմասայից Չափանշված, սննդի հետ շփվող 2լ	հատ	70
27.	Կայլոն 28 գ հաբեր	հատ	150
28.	Հեղուկ զուգարան լվանալու 1 լ-ոց, YPLON, կամ համարժեք	լիտր	400
29.	Հատակի շոր 80/120 սմ 4 կողքերը կարած	հատ	900
30.	Հեղուկ Հատակ լվանալու/ սալիկի/1 լ-ոց Bagi, emsal Կամ համարժեք	լիտր	800
31.	Հեղուկ Պատուհան լվանալու/Հեղուկ սփրեյ, 0.5 լ տարաներով	հատ	600
32.	Ձեռնոց Պոլիէթիլենային Ոչ միանգամյա օգտագործման/ LogixԿամ համարժեք 4-5 մմ հաստությամբ, որակյալ	գույգ	2000
33.	Մաքրող փոշի Տարաները թղթաԿափարիչը երկաթյա Sorti, cometԿամ համարժեք 0.5կգ-ոց	հատ	2000
34.	Մրբիչ Թղթա մրանվագԵրկշերտանի ռուլոնով 100% ցելուլոզա 25-26 սմ լայնությամբ	հատ	800
35.	Սառնարանի աման Պլաստմասայիցուղղանկյունաձև, թափանցիկ հերմետիկ փակվող կափարիչով 2լ	հատ	20
36.	Սառնարանի աման Պլաստմասայից ուղղանկյունաձև, , թափանցիկ հերմետիկ փակվող կափարիչով 3 լ	հատ	25
37.	Սառնարանի աման Պլաստմասայից ուղղանկյունաձև, թափանցիկ հերմետիկ փակվող կափարիչով 10 լ	հատ	5
38.	Սառնարանի աման Պլաստմասայիցուղղանկյունաձև, թափանցիկ հերմետիկ փակվող կափարիչով4 լ	հատ	15
39.	Տարա պլաստմասայից սննդային կափարիչով 5լ. Թափանցիկ հերմետիկ փակվող կափարիչով	հատ	25
40.	Տարա պլաստմասայից սննդային կափարիչով 8լ թափանցիկ հերմետիկ փակվող կափարիչով	հատ	15
41.	Տարա պլաստմասայիցսննդային կափարիչով 12լ թափանցիկ հերմետիկ փակվող կափարիչով	հատ	8
42.	Տարա պլաստմասայիցսննդային կափարիչով 15լ թափանցիկ հերմետիկ փակվող կափարիչով	հատ	7
43.	Տարա Սննդային Ջրի, չկոտրվող նյութից, 5-7 մմ հաստությամբ կափարիչով40լ	հատ	13
44.	Տարա Ջրի չկոտրվող նյութից, 5-7 մմ հաստությամբ կափարիչով 50լ	հատ	8
45.	Տարա Սննդային Ջրի չկոտրվող նյութից, 5-7 մմ հաստությամբ կափարիչով60լ	հատ	17
46.	Տարա Ջրի չկոտրվող նյութից, 5-7 մմ հաստությամբ կափարիչով70լ	հատ	20
47.	Տոպրակ աղբի Աղբի պոլիէթիլենային սև կամ գունավոր30լ20 հատանոց փաթեթով	հատ	60000
48.	Տոպրակ աղբի Աղբի պոլիէթիլենային սև կամ գունավոր 120լ 10 հատանոց փաթեթով	հատ	12000
49.	Տոպրակ ԴեղորայքիՄիանվագՊոլիէթիլենայինժշկական տարբերանշանով1 լ	հատ	20000
50.	Տագիկ Պլաստմասայից10լ	հատ	2
51.	Տագիկ Պլաստմասայից20լ	հատ	2
52.	Տագիկ Պլաստմասայից30լ	հատ	4
53.	Ցանց Լվացքի 50 լ-ոց	հատ	6
54.	Ցանց Դեղորայքի30 լ կափարիչով	հատ	8
55.	Ցելոֆան ՊոլիէթիլենԵրկշերտ , բարձր թափանցիկությամբ	մետր	100
56.	Փայտ հատակի Հատակ լվանալու1.5-2 մ երկարության փայտե կամ պլաստմասայե լաքապատված	հատ	30
57.	Էսենցիա Սննդի էսենցիա,220-250 գր տարաներով	լիտր	10
58.	Օճառ Ձեռքի Հեղուկ Elvi կամ համարժեք 0.4 կգ տարայով	հատ	2000
59.	Օճառ ՁեռքիՉորսուների, կտորների և այլ ձևերով, որակական թիվը/ ճարպաթթուների գանգվածը վերահաշվարկված 100 կտորի անվանական գանգվածի համար/ ոչ պակաս ,, Չեզոք,, և ,,Էքստրա,, տեսակների համար 78գ,,Մանկական ,, և ,, Սովորական ,, տեսակների համար 74գ , սողայանյութերի գանգվածային / վերահաշվարկված ըստ Na2O/ մասը ոչ ավելի ,, Չեզոք,, տեսակի համար բացակայում է , ,,Էքստրա տեսակի համար 0.2 % , Մանկական ,, տեսակի համար ,, Սովորական ,, տեսակի համար 0.22օճառից անջատված ճարպաթթուների պնդեցման ջերմաստիճանը / տիտրը 36-41 C/ նատրիումի քլորիդի գանգվածային մասը 0.4%-ից ոչ ավելի , անվտանգությունը ըստ ՀՀ առողջապահության նախարարի 2005թ. նոյեմբերի 24-ի N1109-Ն հրամանով հաստատված ,, N2—111-8-2 օճանելիքակոսմետիկական արտադրանքի արտադրությանը և անվտանգությանը ներկայացվող հիգիենիկ պահանջներ ,, սանիտարական կանոնների և նորմերի , մակնշումը և փաթեթավորումը ըստ ԳՕՍՏ 25546-2002 %, 0.15%100գր	հատ	1300
60.	Լվացարան 50/40 Կերամիկա Ուտքով	հատ	4
61.	Խողովակ պլաստմասայից Ф50 2մ	հատ	5
62.	Խողովակ պլաստմասայից Ф100 3մ	հատ	5
63.	Ճկուն խողովակ Սառը ջրի 40սմ	հատ	80

64.	Ճկուն խողովակ Տաք ջրի 40սմ	հատ	80
65.	Խողովակ մետաղապլաստ25	մ	30
66.	Ջեռուցման մարտկոցի անկյունային փական /Եվրոպական արտադրության կամ համարժեք /20/20	հատ	25
67.	Կորոր մմ 12*12	հատ	6
68.	Փական ջրի Պտուտակով Փ50մմ	հատ	4
69.	Կորոր մմ 15*15	հատ	6
70.	Կորոր մմ 20*15	հատ	6
71.	Հայելի Ամրացնելու հարմարանքով Շրջանակով 50/7	հատ	6
72.	Մեկուսիչ ժապավեն	հատ	30
73.	Նստակոնք /Եվրոպական կամ համարժեք/	հատ	2
74.	Ջեռուցման մարտկոց /Եվրոպական կամ համարժեք/16լ 18 քառ մ	հատ	15
75.	Ջեռուցման մարտկոց կոմպ./Եվրոպական կամ համարժեք/4 կախիչ 4 խցան, 1 օդահանիչ	հատ	2
76.	Ջերմաչափ սենյակի	հատ	20
77.	Ջրի պապլավով , պլաստմասայից կողքից/Եվրոպական կամ համարժեք/ 2000լ տարողության համար	հատ	5
78.	Ջրի ծորակ Տաք և սառը / 1 թևանի 1 թաթիկով / Տարբեր չափերի, խառնիչային տիպի, ըստ ԳՕՍՏ 25809-96 , արտասահմանյան	հատ	70
79.	Սիլիկոն 280մլ	հատ	4
80.	Բաղնիքի սմիսիտել տաք և սառը ցուղով/Եվրոպական արտադրության կամ համարժեք/2 փականով	հատ	8
81.	Վինտիլ ջրի 20/20պտույտ	հատ	20
82.	Փական մարտկոցի	հատ	30
83.	Միջուկ փականի/Եվրոպական արտադրության կամ համարժեք/8մմ	հատ	30
84.	Մետաղապլաստ պատուհանի բռնակ	հատ	40
85.	Ճկուն խողովակ/ սիֆոն/ Կոյուղու	հատ	70
86.	Ճկուն խողովակԹթվածնի բարձր ճնշմանհամար60-70 սմ200-250 ճնշում	հատ	5
87.	ՍոսինձMAF KP 705400մգ	հատ	20
88.	Ջրի գոծիչ25/252 լիտր	հատ	2
89.	Ջրամղիչ220-230վ2900 պտույտ4-5-40 լ/րոպե38մ բարձրության0.37 կվտ	հատ	1
90.	Ջրամղիչ220-230վ2900 պտույտ120 լ/րոպե52մ բարձրության1.6 կվտ	հատ	1
91.	Բռնակ այլումինի դռան/ Եվրոպական արտադրության կամ համարժեք/	հատ	20
92.	Փական այլումինի դռանKALE5/18 սմ	հատ	15
93.	Փականի բռնակ BEBTOLLIAF 106-L96 ABB	հատ	25
94.	Այլումինե դռան փական /գաշովկա /	հատ	15
95.	Մետաղապլաստե դռների պետլի	հատ	35
96.	Աղբարկղ ցինկապատ80x25 Աղբարկղը բաղկացած է 2 մասից, արտաքին ձևավոր թիթեղից և ներքին թիթեղյա արկղից : Աղբարկղի արտաքին մասի թիթեղների հաստությունը ` 0.6 մմ ներքին արկղի հաստությունը 0.5մմ : Աղբարկղի արտաքին մասի գույնը ` ծագանակագույն, իսկ կափարիչը և ներքին արկղը ` սև: կափարիչը արտաքին մասին ամրանում է 2 մետաղյա օղակներով , իսկ ներքին արկղի վրա նախատեսվում է մետաղալարից բռնակ:	հատ	6
97.	Դռան շվեցար 25 կգ-ոց	հատ	30
98.	Նստակոնքի կափարիչ կաշվից	հատ	50
99.	Նստակոնքի բաջոկի ակսեսուար Նովա	հատ	20
100.	Պլիտա էլեկտրական / Եվրոպական կամ համարժեք/ Քարով2 տեղանոց 1 տարվա երաշխիք	հատ	5
101.	Պլիտա էլեկտրական / Եվրոպական կամ համարժեք/ Քարով1 տեղանոց 1 տարվա երաշխիք	հատ	10
102.	Կաթսա էմալապատ 5լ	հատ	3
103.	Կաթսա էմալապատ 7լ	հատ	3
104.	Կաթսա էմալապատ 3լ	հատ	5
105.	Արդուկ 2 կգ-ոց 1 տարվա երաշխիք	հատ	2
106.	Օճառ լվացքի սև	հատ	40
107.	Աղ կերակրի	հատ	40
108.	Սոդա կերակրի	հատ	40
109.	ԷլեկտրականԱպահովիչ 250 Ամիաֆազ հախճապակե Հալուն ապահովիչ անվանական հոսանքը 250 Ա փոփոխական հոսանքի , լարումը 380 Վ ըստ ԳՕՍՏ	հատ	7

	17242-86 կամ համարժեք / ՊՆ 2 / նախատեսված է գերբեռնման և կարճ միացումների ժամանակ ուժային գծերի պաշտպանության համար : Անվտանգությունը ըստ ՀՀ կառավարության 2005 թ փետրվարի 3-ի N150-Ն որոշմամբ հաստատված , ցածր լարման էլեկտրասարքավորումներին ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգին և ԳՕՍ 12.2.007.6-75, ԳՕՍ 12.1.019-2009, ԳՕՍ 12.1.030.-81, ԳՕՍ 12.3.019-80		
110.	Ավտոմատ /եվրոպական արտադրության կամ համարժեք/ 25A Միաֆազ /LEGRAND/	հատ	7
111.	Ավտոմատ /եվրոպական արտադրության կամ համարժեք/32A եռաֆազ/LEGRAND/	հատ	3
112.	Ավտոմատ /եվրոպական արտադրության կամ համարժեք/40A եռաֆազ/LEGRAND/	հատ	2
113.	Ավտոմատ /եվրոպական արտադրության կամ համարժեք/63A եռաֆազ/LEGRAND/	հատ	4
114.	Վիլկա էլեկտրական/եվրոպական արտադրության կամ համարժեք/ Հողանցման /MAKEL/	Հատ	20
115.	Վիլկա էլեկտրական/եվրոպական արտադրության կամ համարժեք/ Առանց հողանցման /MAKEL/	Հատ	20
116.	Ավտոմատ /եվրոպական արտադրության կամ համարժեք/100A եռաֆազ/LEGRAND/	հատ	2
117.	Ավտոմատ /եվրոպական արտադրության կամ համարժեք/25A եռաֆազ/LEGRAND/	հատ	2
118.	Ավտոմատ /եվրոպական արտադրության կամ համարժեք/50A Միաֆազ/LEGRAND/	հատ	2
119.	Ավտոմատ /եվրոպական արտադրության կամ համարժեք/32A Միաֆազ/LEGRAND/	հատ	2
120.	Ավտոմատ /եվրոպական արտադրության կամ համարժեք/63A Միաֆազ/LEGRAND/	հատ	2
121.	Լյումինեսցենտային լամպերի ստարայորներ	հատ	50
122.	Էլեկտրական լամպ 100w	հատ	30
123.	Էլեկտրական լար Պղնձե PPV2*1.5	մ	50
124.	Էլեկտրական լար Պղնձե PPV3*1.5	մ	30
125.	Էլեկտրական լար Պղնձե PPV2*2.5	մ	50
126.	Էլեկտրական լար Պղնձե PPV3*2.5	մ	30
127.	Էլեկտրական ֆազի հսկող ռելե եռաֆազ	հատ	2
128.	Հաղորդակար Պղնձե , ցածր լարման KSPV 4*025	մ	30
129.	Հաղորդակար UTP	մ	100
130.	Էլեմենտ CR20323V	հատ	20
131.	Էլեմենտ լամպ /եվրոպական կամ համարժեք/Խողովակաձև լյումինեսցենտային լամպ՝ ուղիղ , օղակաձև կամ U –ձև G-13 տիպի լամպակոթով , 20, 25 և 40 վտ անվանական հզորությամբ , 50 Հց հաճախականության , համապատասխան երկարությամբ , ԳՕՍ 6825-91: Անվտանգությունը՝ ըստ ՀՀ կառավարության 2005թ. Փետրվարի 3-ի N150-Ն որոշմամբ հաստատված ,, Ցածր լարման էլեկտրասարքավորումներին ներկայացվող պահանջների ,, տեխնիկական կանոնակարգի և ԳՕՍ Ռ ՄԷԿ 61195-99 Phillips, xamelion, torsh 18W	հատ	15
132.	Էլեմենտ լամպ /եվրոպական կամ համարժեք 26W Խողովակաձև լյումինեսցենտային լամպ՝ ուղիղ , օղակաձև կամ U –ձև G-13 տիպի լամպակոթով , 20, 25 և 40 վտ անվանական հզորությամբ , 50 Հց հաճախականության , համապատասխան երկարությամբ , ԳՕՍ 6825-91: Անվտանգությունը՝ ըստ ՀՀ կառավարության 2005թ. Փետրվարի 3-ի N150-Ն որոշմամբ հաստատված ,, Ցածր լարման էլեկտրասարքավորումներին ներկայացվող պահանջների ,, տեխնիկական կանոնակարգի և ԳՕՍ Ռ ՄԷԿ 61195-99 Phillips, xamelion, torsh	հատ	30
133.	Էլեմենտ լամպ /եվրոպական կամ համարժեք/ 11W Խողովակաձև լյումինեսցենտային լամպ՝ ուղիղ , օղակաձև կամ U –ձև G-13 տիպի լամպակոթով , 20, 25 և 40 վտ անվանական հզորությամբ , 50 Հց հաճախականության , համապատասխան երկարությամբ , ԳՕՍ 6825-91: Անվտանգությունը՝ ըստ ՀՀ կառավարության 2005թ. Փետրվարի 3-ի N150-Ն որոշմամբ հաստատված ,, Ցածր լարման էլեկտրասարքավորումներին ներկայացվող պահանջների ,, տեխնիկական կանոնակարգի և ԳՕՍ Ռ ՄԷԿ 61195-99 Phillips, xamelion, torsh	հատ	30
134.	Ինքնաձիգ 41429	հատ	150
135.	Լամպ 100w Էլեկտրական լամպ / 220-230/ Վ լարման, 50 Հց հաճախականության , 100 վտ հզորությամբ , թափանցիկ , տանձաձև կամ սնկաձև , կոթառը E27/27 տիպի , ԳՕՍ 2239-79 կամ համարժեք: Անվտանգությունը՝ ըստ ԳՕՍ 28712-90 և ՀՀ կառավարության 2005թ. փետրվարի 3-ի N150-Ն որոշմամբ հաստատված , ցածր լարման էլեկտրասարքավորումներին ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգին	հատ	70
136.	Լամպ TL-D18w60սմ Խողովակաձև լյումինեսցենտային լամպ ուղիղ, օղակաձև կամ U –ձև G-13 տիպի լամպակոթով , 20,25 և 40 վտ անվանական հզորությամբ , 50 Հց հաճախականության , 60 սմ երկարությամբ , ԳՕՍ 6825-91: Անվտանգությունը՝ ըստ ՀՀ կառավարության 2005թ. փետրվարի 3-ի N150-Ն որոշմամբ հաստատված՝ ցածր լարման էլեկտրասարքավորումներին ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգի և ԳՕՍ Ռ ՄԷԿ 61195-99 Phillips	հատ	200
137.	Լամպ TL-D36w 120 սմ Խողովակաձև լյումինեսցենտային լամպ ուղիղ, օղակաձև կամ U –ձև G-13 տիպի լամպակոթով , 20,25 և 40 վտ անվանական հզորությամբ , 50 Հց հաճախականության , 60 սմ երկարությամբ , ԳՕՍ 6825-91: Անվտանգությունը՝ ըստ ՀՀ կառավարության 2005թ. փետրվարի 3-ի N150-Ն որոշմամբ հաստատված՝ ցածր լարման էլեկտրասարքավորումներին	հատ	150

	ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգի` և ԳՕՍՍ Ռ ՄԷԿ 61195-99 Fillips		
138.	Լամպ 60w E27 R63 Fillips	հատ	500
139.	Լամպ DNAT-150 W	հատ	16
140.	Լամպ 60 w Էլեկտրական լամպ / 220-230/ Վ լարման, 50 Հց հաճախականության , 100 Վտ հզորությամբ , թափանցիկ , տանձաձև կամ սնկաձև , կոթառը E27/27 տիպի , ԳՕՍՍ 2239-79 կամ համարժեք: Անվտանգությունը` ըստ ԳՕՍՍ 28712-90 և ՀՀ կառավարության 2005թ. փետրվարի 3-ի N150-Ն որոշմամբ հաստատված , ցածր լարման էլեկտրասարքավորումների ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգին	հատ	70
141.	Գեյզեր Ջրատաքացուցիչ, էլեկտրատաքացուցիչ կենցաղային 9 կվտ JEMSAN	հատ	2
142.	Լուսամփոփ 2*36w TINKO	Հատ	20
143.	Լուսամփոփ 2*18w TINKO	Հատ	20
144.	Լյումինեսցենտային լամպերի դրոսելներ	Հատ	7
145.	Մեկուսիչ ժապավեն օղակաձև	Հատ	30
146.	Լուսամփոփ 1*18w TINKO	Հատ	7
147.	Լուսամփոփ 4*18w	Հատ	10
148.	Անջատիչ 1 տեղանոց MAKEL	Հատ	10
149.	Անջատիչ 2 տեղանոց MAKEL	հատ	10
150.	Վարդակ Հողանցումով 1 տեղանոց MAKEL	հատ	15
151.	Վարդակ Հողանցումով 2 տեղանոց MAKEL	հատ	7
152.	Վարդակ Հողանցումով 4 տեղանոց Առանց լարի MAKEL	հատ	4
153.	Վարդակ Հողանցումով 6 տեղանոց Առանց լարի MAKEL	հատ	3
154.	Վարդակ 3 տեղանոց Առանց լարի MAKEL	հատ	3
155.	Վարդակ 4 տեղանոց Առանց լարի MAKEL	հատ	4
156.	Վարդակ Հեռախոսի MAKEL	հատ	4
157.	Էլ. Ձողիչ 220վ 40 վտ	հատ	2
158.	Էլ. Ձողիչ 220վ 25 վտ	հատ	1
159.	Պերֆերատորի սվերլո 16/60 մմ CDC պլյուս	հատ	2
160.	Պերֆերատորի սվերլո 12/400 մմ CDC պլյուս	հատ	1
161.	NZY400 վտ DNAT լամպերի համար	հատ	4
162.	Դրոսել 250 վտ DNAT լամպերի համար	հատ	3
163.	Դյուրել շուռուպ Մեխովի 6մմ-40մմ	հատ	100
164.	Կուսաչկի/կծաքցան/ Մինչև 1000վ	հատ	1
165.	Հարթաշուրթ Մինչև 1000վ	հատ	1
166.	Պտուտահան Մինչև 1000վ	կոմպ	1
167.	Բալգարկա / փոքր/	հատ	1
168.	Փոշեկուլ 1800- 2000վտ,	հատ	1
169.	Քամիչ իր տակդիրով 6-7 լ	հատ	6

- Վաճառողը պետք է ապահովի Ապրանքի տեղափոխումը Ք.Հրազդան, Մ.Բաղրամյան թաղ. Պուրակային 32 հասցեով:
- Ապրանքի տեղափոխումը կատարվում է պատվերի շրջանակներում
- /Պարտադիր պայման` ապրանքը պետք է լինի չօգտագործված
- „ Գնումների մասին „ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 5-րդ մասի գնման առարկաների հատկանիշների բնութագրերում հղում / որևէ առևտրային նշանին , ֆիմային անվանմանը, արտոնագրին , էսքիզին կամ մոդելին , ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին/ պարունակելու դեպքում կիրառելի է „կամ համարժեք,,

ԳՆՈՐԴ

ՎԱՃԱՌՈՂ

/ստորագրություն/
Կ.Տ

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 2
<< >> << >> 20 թ. կնքված
,N _____ ծածկագրով գնման պայմանագրի

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ , ԼՎԱՑՔԱՆՅՈՒԹԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ

ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Հ/Հ	Ապրանքի Անվանումը	Նախընտրելի ժամանակահատված
1	2	3
1	ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՊՐԱՆՔՆԵՐ , ԼՎԱՑՔԱՆՅՈՒԹԵՐ	Տնտեսական ապրանքների , լվացքանյութերի ձեռք բերումը կատարվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում լրացուցիչ համաձայնագրով , պայմանագրի կնքման օրվանից հաշված երեսուն օրացուցային օրվա ընթացքում:

ԳՆՈՐԴ

ՎԱՃԱՌՈՂ

/ստորագրություն/
Կ.Տ

/ստորագրություն/
Կ.Տ

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ , ԼՎԱՑՔԱՆՑՈՒԹԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Հ/Հ	Ապրանքի Անվանումը	Նախընտրելի ժամանակահատված
1	2	3
1	ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՊՐԱՆՔՆԵՐ , ԼՎԱՑՔԱՆՑՈՒԹԵՐ	Վճարումը կկատարվի „Գնումների մասին„ ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 7-րդ կետի համաձայն

ԳՆՈՐԴ

ՎԱՃԱՌՈՂ

/ստորագրություն/
Կ.Տ

/ստորագրություն/
Կ.Տ

Պայմանագրի կողմ

Պատվիրատու

 գտնվելու վայրը _____
 հհ _____

 հվհհ _____

 գտնվելու վայրը _____
 հհ _____

 հվհհ _____

**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
 ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ**

§ 1 § 20 Ա.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «___» «_____» 20 թ.

Պայմանագրի համարը՝ _____

Պատվիրատուն՝ ի դեմս _____ և

Պայմանագրի կողմը՝ ի դեմս _____, հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ «___» «_____» 20 թ. կազմված՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի N եզրակացությունն այն մասին, որ Պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված մատակարարումները համապատասխանում են Պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին. Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատակարարել է հետևյալ ապրանքները՝

Մատակարարված ապրանքների

N	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Վերոհիշյալ մատակարարումների վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքը հանձնեց

Ապրանքը ընդունեց

ստորագրություն

ստորագրություն

ազգանուն, անուն
Կ.Տ.

ազգանուն, անուն
Կ.Տ.

Հավելված 4.1

<< >> << >> 20 թ. կնքված

N _____ ծածկագրով գնման պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Գնորդ) և
(Գնորդի անունը)

_____ի (այսուհետ՝ Վաճառող) միջև 20 թ. _____-ին կնքված N _____

(Վաճառողի անունը)

գնման պայմանագրի շրջանակներում Վաճառողը 20 թ. _____-ին հանձնման-
ընդունման նպատակով Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

Ապրանքի		
Անվանումը	Քանակական ցուցանիշը (փաստացի)	Չափի միավորը

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

Ընդունեց

հայտը նախագծած ներկայացուցիչ՝

ազգանուն, անուն

ազգանուն, անուն

ստորագրություն

ստորագրություն

ՀԱՐՑՈՒՄ

ՀՀ կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի "Գնումների գործընթացի կազմակերպման" կարգի 47-րդ կետի 1-ին մասով նախատեսված տվյալների ճշտման մասին

.....-ի կարիքների համար կազմակերպված

պատվիրատուի անվանումը

գնման ընթացակարգի ծածկագիրը

ծածկագրով կազմակերպման գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 20..... թվականի-ի N որոշմամբ 1-ին և 2-րդ տեղեր են զբաղեցրել ներքոհիշյալ մասնակիցները`

N	Մասնակցի		
	անվանումը	հարկ վճարողի հաշվառման համարը	հայտը ներկայացվելու ամիսը, ամսաթիվը, տարեթիվը

Խնդրում ենք ՀՀ կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի N 168-Ն որոշմամբ հաստատված "Գնումների գործընթացի կազմակերպման" կարգի 48-րդ կետով սահմանված ժամկետում տրամադրել եզրակացություն մասնակիցների` նույն կարգի 47-րդ կետի 1-ին մասով նախատեսված տվյալների վերաբերյալ:

..... ծածկագրով գնահատող հանձնաժողովի քարտուղար

ստորագրություն

ՀՀ կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի "Գնումների գործընթացի կազմակերպման" կարգի 47-րդ կետի 1-ին մասով նախատեսված հարցման մասին

Գնման ընթացակարգի ծածկագիրը	Պատվիրատուի անվանումը	Մասնակցի								
		անվանումը	հարկ վճարողի հաշվառման համարը	հայտը ներկայացվելու օրվա դրությամբ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ժամկետանց հարկային պարտավորությունների գումարի չափը/ՀՀ դրամ	հայտը ներկայացվելու նախորդող երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը/ՀՀ դրամ				հայտը ներկայացվելու նախորդող հաշվետու տարվա ընթացքում պարտավորությունների և ակտիվների հաշվապահական հավելջռային արժեքը/ՀՀ դրամ	
					ակտիվներ	պարտավորություն	20..թ.	20..թ.	20..թ.	Ընդամենը

Եզրակացությունը տրվել է վարչության աշխատակից-ի կողմից

.....
պաշտոնյայի անունը, ազգանունը

.....
ստորագրություն

ՏՈՒԺԱՆՔԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N
(պայմանագրի կատարման ապահովում)

ք. Երևան

<<____>> _____ 20 թ.

<<Ընկերության անվանումը>>, ի դեմս Ընկերության տնօրեն՝ <<Ընկերության տնօրենի անուն ազգանունը, անձնագրային տվյալները>>, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա՝ (այսուհետև՝ Ընկերություն), սույնով միակողմանի սահմանում է հետևյալ տուժանքի վճարման համաձայնությունը.

1. ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Ընկերությունը մասնակցում է <<Հրագրանի Բժշկական Կենտրոն >> ՓԲԸ * (այսուհետև՝ Պատվիրատու) կողմից կազմակերպված՝ <<Տնտեսական ապրանքների, լվացքանյութերի >>* ձեռքբերման <<ՀԲԿ—ՇՀԱՊՁԲ-17 / -005>>* ծածկագրով ՇՀ** գնման ընթացակարգին:

1.2 Որպես գնման ընթացակարգի արդյունքում կնքվելիք պայմանագրի կատարման ապահովում, Ընկերությունը Պատվիրատուին է ներկայացնում սույն տուժանքի համաձայնագիրը և կից վճարման պահանջագիրը՝ լրացված և հաստատված Ընկերության կողմից՝ համաձայն ՀՀ կենտրոնական բանկի հաստատած՝ <<Վճարահաշվարկային գործառնությունների կատարման ժամանակ կիրառվող փաստաթղթերի նվազագույն վավերապայմանների և դրանց լրացման կանոնների>>:

1.3 Ընկերության կողմից գնման ընթացակարգի արդյունքում կնքված պայմանագիրը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում Պատվիրատուն սույն տուժանքի համաձայնագիրը և կից վճարման պահանջագիրը (այսուհետև՝ պայմանագրի կատարման ապահովման վճարման պահանջագիր) ներկայացնում է Ընկերությանը սպասարկող բանկին (այսուհետև՝ Բանկ)՝ այդ մասին գրավոր տեղեկացնելով Ընկերությանը:

1.4 Բանկը պայմանագրի կատարման ապահովման վճարման պահանջագիրը ընդունում է կատարման՝ Պատվիրատուի կողմից սույն տուժանքի համաձայնագրի և գնման ընթացակարգի արդյունքում կնքված պայմանագրի չկատարման կամ ոչ պատշաճ կատարման փաստը հաստատող փաստաթղթի բնօրինակները, որոնք նշվում են պայմանագրի կատարման ապահովման վճարման պահանջագրում, Բանկին տրամադրվելու դեպքում:

1.5 Պայմանագրի կատարման ապահովման վճարման պահանջագրում նշված գումարի վճարման հետևանքով առաջացած ռիսկերի (Ընկերության կրած վնասների) համար Բանկը պատասխանատվություն չի կրում:

1.6 Սույն համաձայնագիրը և կից պայմանագրի կատարման ապահովման վճարման պահանջագիրը Բանկ ներկայացնելուց հետո, Բանկից անկախ պատճառներով, տասն աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուին գումարը չվճարվելու դեպքում, Պատվիրատուն չվճարման հետ կապված Ընկերության մասին տեղեկությունները փոխանցում է <<ԱՔՌԱ Քրեդիթ Ռեփորթինգ>> ՓԲԸ (Վարկային բյուրո):

2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1 Սույն համաձայնագիրը ուժի մեջ է մտնում Ընկերության կողմից վավերացման պահից և գործում է մինչև Ընկերության կողմից կնքված պայմանագրով նախատեսված պարտավորությունների ամբողջ ծավալով կատարումը:

2.2 Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

3. Ընկերության հասցեն, բանկային վավերապայմանները՝

Ընկերության անվանումը՝

Հասցեն՝

Սպասարկող քանկի անվանումը,

Հ/Հ

ՀՎՀՀ

տնօրեն՝ -----

(ստորագրություն)

գլխ. հաշվապահ՝ -----

(ստորագրություն)

Կ.Տ

** Նախապես լրացվում է պատվիրատուի կողմից՝ հրավերով:*

*** Պատվիրատուի կողմից նախապես հրավերով լրացվում է գնման ընթացակարգը:*

1. ՎՃԱՐՄԱՆ ՊԱՀԱՆՁԱԳԻՐ³¹ N (պայմանագրի կատարման ապահովում)	
2. Ներկայացման ամսաթիվը՝ "___" ___ 20___թ.	
3. Ընկերություն (այսուհետ՝ վճարող)՝	
4. Վճարողի բանկը՝	
5. Վճարողի հաշվի համարը՝	
6. Վճարողի ՀՎՀՀ՝	
7. Վճարողի ՀԾՀ՝	
8. Շահառու՝	
9. Շահառուի ՀՎՀՀ՝	
10. Շահառուի բանկը՝	
11. Շահառուի հաշվի համարը /հշ.N/	
12. Գումարը թվերով և բառերով՝	
13. Արժույթը (բառերով և կողով)՝	
14. Գործարքի /վճարման/ նպատակը՝	
15. Պայմանագրի ծածկագիրը՝	
16. Փաստաթղթերի անվանումը, դրանց համարները, տրամադրման պայմանը	
17. կից՝ --- էջ	
19.ա. Շահառուի ստորագրությունները /_____/	18.ա. Վճարողի ստորագրությունները՝ /_____/
19.բ. Կ.Տ.	18.բ. Կ.Տ.
Կատարված է շահառուի բանկի կողմից	Կատարված է վճարողի բանկի կողմից
20.ա. /_____/	21.ա. /_____/
/ստորագրություն/	/ստորագրություն/
20.բ. Կ.Տ.	21.բ. Կ.Տ.
"___" ___ 20___թ.	22. Կատարման ամսաթիվը՝ "___" ___ 20___թ.

³¹ Վճարման պահանջագիրը լրացվում է համաձայն սույն հրավերով սահմանված «Վճարման պահանջագրի պարտադիր վավերապայմանների և լրացման կարգի»:

Վճարման պահանջագրի պարտադիր վավերապայմանները և լրացման կարգը

Հ/Հ	<<Վճարման պահանջագիր>> փաստաթղթի վավերապայմանները	Նշված դաշտի/ վավերապայմանի առկայությունը փաստաթղթում	Վավերապայմանի լրացման պահանջը	Վավերապայմանը լրացնող կողմը՝ շահառու կամ վճարողը
1	2	3	4	5
1.	վճարման պահանջագրի համարը	պարտադիր	պարտադիր	լրացվում է շահառուի կողմից՝ վճարողի բանկին վճարման պահանջագիրը ներկայացնելիս
2.	ներկայացման ամսաթիվը	պարտադիր	պարտադիր	լրացվում է շահառուի կողմից՝ վճարողի բանկին վճարման պահանջագրի ներկայացման օրը
3.	վճարող	պարտադիր	պարտադիր լրացվում է այն անձի (վճարողի) անունը, որի հաշվից պետք է գանձվի պահանջագրով նշված գումարը: Լրացվում է վճարողի անունը, ազգանունը, եթե այն ֆիզիկական անձ է կամ անվանումը, եթե այն իրավաբանական անձ է: Նշվում են նաև այլ տվյալներ՝ ըստ անհրաժեշտության: Լրացվում է վճարողի կողմից	լրացվում է վճարողի կողմից
4.	վճարողին սպասարկող ֆինանսական կազմակերպության (մասնաճյուղի) անվանումը (վճարողի բանկը)	պարտադիր	պարտադիր	լրացվում է վճարողի կողմից
5.	վճարողի հաշվի համարը	պարտադիր	պարտադիր լրացվում է վճարողի բանկային հաշվի համարը իրեն սպասարկող ֆինանսական կազմակերպությունում (մասնաճյուղի), որից պետք է գանձվի պահանջագրով նշված գումարը	լրացվում է վճարողի կողմից
6.	վճարողի ՀՎՀՀ	պարտադիր	ոչ պարտադիր լրացվում է Հայաստանի Հանրապետության նորմատիվ իրավական ակտերով սահմանված դեպքերում, երբ վճարողը հանդիսանում է հաշվառված հարկատու	լրացվում է վճարողի կողմից
7.	վճարողի ՀՕՀ	պարտադիր	ոչ պարտադիր լրացվում է Հայաստանի Հանրապետության նորմատիվ իրավական ակտերով սահմանված դեպքերում, երբ վճարողը հանդիսանում է ֆիզիկական անձ	լրացվում է վճարողի կողմից
8.	շահառու	պարտադիր	պարտադիր լրացվում է շահառու հանդիսացող անձի (վճարումը ստացողի)	նախապես լրացվում է շահառուի կողմից՝ հրավերով

			անվանումը: Նշվում են նաև այլ տվյալներ՝ ըստ անհրաժեշտության	
9.	շահառուի ՀՎՀՀ	պարտադիր	ոչ պարտադիր լրացվում է Հայաստանի Հանրապետության նորմատիվ իրավական ակտերով սահմանված դեպքերում, երբ շահառուն հանդիսանում է հաշվառված հարկատու	նախապես լրացվում է շահառուի կողմից՝ հրավերով
10.	շահառուին սպասարկող ֆինանսական կազմակերպության (մասնաճյուղի) անվանումը (շահառուի բանկը)	պարտադիր	պարտադիր	նախապես լրացվում է շահառուի կողմից՝ հրավերով
11.	շահառուի հաշվի համարը	պարտադիր	պարտադիր լրացվում է շահառուի այն բանկային հաշվի համարը, որի վրա պետք է փոխանցվեն վճարողից գանձված միջոցները	նախապես լրացվում է շահառուի կողմից՝ հրավերով
12.	գումարը (թվերով և բառերով)	պարտադիր	պարտադիր լրացվում է շահառուին վճարման ենթակա գումարը	լրացվում է վճարողի կողմից
13.	արժույթը (բառերով և կողով)	պարտադիր	պարտադիր	լրացվում է վճարողի կողմից
14.	գործարքի նպատակը	պարտադիր	պարտադիր	նախապես լրացվում է շահառուի կողմից՝ հրավերով
15.	պայմանագրի ծածկագիրը (համարը)	պարտադիր	պարտադիր լրացվում է պահանջագրի ներկայացման համար հիմք հանդիսացող պայմանագրի համարը կամ գնման ընթացակարգի ծածկագիրը	լրացվում է վճարողի կողմից
16.	փաստաթղթերի անվանումը, դրանց համարները, տրամադրման պայմանները	պարտադիր	ոչ պարտադիր լրացվում է պահանջագրով նշված գումարի գանձման և շահառուին վճարման համար հիմք հանդիսացող փաստաթղթի տվյալները, որոնց հիման վրա շահառուն վճարման պահանջագիր է ներկայացնում վճարողին սպասարկող բանկին, ինչպես նաև նշվում են վճարողին փաստաթղթերի տրամադրման պայմանները (տրամադրում՝ վճարի դիմաց, տրամադրում՝ ակցեպտի դիմաց, տրամադրում՝ երաշխիքի դիմաց և այլն)	լրացվում է շահառուի կողմից
17.	առդիր էջերի քանակը	պարտադիր	ոչ պարտադիր լրացվում է պահանջագրին կից ներկայացված փաստաթղթերի էջերի քանակը, որոնք պետք է տրամադրվեն վճարողին	լրացվում է շահառուի կողմից
18.ա.	վճարողի ստորագրությունը	պարտադիր	ոչ պարտադիր այս դաշտը չի լրացվում, եթե վճարողի և վճարողին սպասարկող ֆինանսական կազմակերպության	ստորագրվում է վճարողի կողմից

			(մասնաճյուղի) միջև կնքված պայմանագրով սահմանվել են այն դեպքերը, երբ վճարողը նախապես տալիս է իր համաձայնությունը/լիազորում է ֆինանսական կազմակերպությանը (մասնաճյուղին) կատարել վճարումներ՝ գանձելով այդ գումարը հաշվից: Ընդ որում վճարողի կողմից չստորագրվելու դեպքում կից ներկայացվում է նաև վճարողի և վճարողին սպասարկող ֆինանսական կազմակերպության (մասնաճյուղի) միջև կնքված համապատասխան պայմանագրի պատճենը:	
18.բ.	վճարողի կնիքը	պարտադիր	պարտադիր՝ կնիքի առկայության դեպքում	կնքվում է վճարողի կողմից
19.ա.	շահառուի ստորագրությունը	պարտադիր	պարտադիր, լրացվում է բանկ ներկայացնելիս	ստորագրվում է շահառուի կողմից
19.բ.	շահառուի կնիքը	պարտադիր	պարտադիր՝ կնիքի առկայության դեպքում	կնքվում է շահառուի կողմից
20.ա.	շահառուին սպասարկող ֆինանսական կազմակերպության (մասնաճյուղի) աշխատակցի ստորագրությունը	պարտադիր	ոչ պարտադիր	
20.բ.	շահառուին սպասարկող ֆինանսական կազմակերպության (մասնաճյուղի) կնիքը	պարտադիր	չի լրացվում	
21.ա.	վճարողին սպասարկող ֆինանսական կազմակերպության (մասնաճյուղի) աշխատակցի ստորագրությունը	պարտադիր	պարտադիր վճարման պահանջագիրը թղթային եղանակով ներկայացնելու դեպքում	
21.բ.	վճարողին սպասարկող ֆինանսական կազմակերպության (մասնաճյուղի) կնիքը	պարտադիր	պարտադիր վճարման պահանջագիրը թղթային եղանակով ներկայացնելու դեպքում	
22.	վճարողին սպասարկող ֆինանսական կազմակերպության (մասնաճյուղի) կողմից կատարման ամսաթիվը, ժամը, րոպեն	պարտադիր	պարտադիր վճարողին սպասարկող ֆինանսական կազմակերպության (մասնաճյուղի) կողմից պարտադիր նշվում է պահանջագրի կատարման ամսաթիվը, ժամը, րոպեն	

շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հրավերի

ԵՐԱՇԽԻՔ N _____

1. Սույն երաշխիքը (այսուհետ՝ երաշխիք) _____
հանդիսանում է (անունը, ազգանունը կամ անվանումը)

(այսուհետ՝ բենեֆիցիար³²) և _____ (այսուհետ՝ պրինցիպալ) միջև
(անունը, ազգանունը կամ անվանումը)

_____ կնքված N _____ պայմանագրից բխող պրինցիպալի
(ամիսը, ամսաթիվը, տարեթիվը) (պայմանագրի համարը)

պարտավորությունների (այսուհետ՝ երաշխավորված պարտավորություններ) կատարման ապահովում:

2. Երաշխիքով _____ (այսուհետ՝ երաշխիք տվող անձ)
(երաշխիք տվող բանկ, այլ վարկային հաստատություն
կամ ապահովագրական կազմակերպություն)

անվերապահորեն պարտավորվում է բենեֆիցիարի՝ սույն երաշխիքով սահմանված կարգով և ժամկետում
ներկայացված պահանջով (այսուհետ՝ պահանջ) բենեֆիցիարին վճարել

_____ (_____) _____ (այսուհետ՝
(գումարը՝ թվերով) (գումարը՝ տառերով) (դրամ կամ այլ արժույթ)

երաշխիքի գումար)՝ պահանջն ստանալուց հետո _____ (_____)
(օրերը՝ թվերով) (օրերը՝ տառերով)

աշխատանքային օրվա ընթացքում: Վճարումը կատարվում է բենեֆիցիարի

_____ բանկում բացված _____
(բանկի անվանումը) (բանկային հաշվի համարը)

բանկային հաշվին փոխանցման միջոցով:

3. Սույն երաշխիքն անհետկանչելի է:

4. Սույն երաշխիքից բխող բենեֆիցիարի՝ երաշխիքի գումարի վճարումը պահանջելու իրավունքը կարող է
փոխանցվել այլ անձի երաշխիք տվող անձի գրավոր համաձայնության դեպքում:

5. Երաշխիքը գործում է _____ մինչև _____ ներառյալ:
(ամիսը, ամսաթիվը, տարեթիվը) (ամիսը, ամսաթիվը, տարեթիվը)

6. Բենեֆիցիարը պահանջը ներկայացնում է երաշխիք տվող անձին գրավոր ձևով: Պահանջին կից ներկայացվում
են հետևյալ փաստաթղթերը՝

- 1) _____
- 2) _____
- 3) _____ :

7. Երաշխիք տվող անձը բենեֆիցիարի կողմից ներկայացված
պահանջը և կից փաստաթղթերն ստանալուց հետո առավելագույնը _____ (_____)
(օրերը՝ թվերով) (օրերը՝ տառերով)

աշխատանքային օրվա ընթացքում քննարկում է ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը՝ սույն երաշխիքի
պայմաններին դրանց համապատասխանությունը պարզելու համար:

8. Այն դեպքում, երբ բենեֆիցիարը ներկայացրել է սույն երաշխիքի պայմաններին համապատասխանող
պահանջ և կից փաստաթղթեր, իսկ երաշխիք տվող անձը երաշխիքով սահմանված ժամկետում չի վճարում
երաշխիքի գումարն ամբողջությամբ, ապա բենեֆիցիարն իրավունք ունի երաշխիք տվող անձի բանկից պահանջելու
երաշխիք տվող անձի հաշվից իրեն վճարել երաշխիքի գումարը՝ ներկայացնելով սույն երաշխիքի իր օրինակը:

³² Պետության համար պարտավորություններ առաջացնող գնումների գործարքների դեպքում՝ որպես
բենեֆիցիար պետք է նշվի Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունը:

9. Այն դեպքում, երբ բենեֆիցիարը ներկայացրել է սույն երաշխիքի պայմաններին համապատասխանող պահանջ և կից փաստաթղթեր, իսկ երաշխիք տվող անձը երաշխիքով սահմանված ժամկետում չի վճարում երաշխիքի գումարն ամբողջությամբ, այդ թվում՝ երբ բենեֆիցիարի կողմից սույն երաշխիքի 8-րդ կետում ամրագրված իր իրավունքից օգտվելու դեպքում՝ երաշխիք տվող անձի բանկային հաշվում առկա չեն բավարար միջոցներ, ապա երաշխիք տվող անձը, իր պարտավորությունը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար բենեֆիցիարին վճարում է տուժանք՝ յուրաքանչյուր ուշացված օրվա համար՝ _____ չափով: Ընդ որում, երաշխիքի գումարի վճարման իր պարտավորությունը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար երաշխիք տվող անձի պատասխանատվությունը չի սահմանափակվում երաշխիքի գումարով:

10. Երաշխիք տվող անձը մերժում է բենեֆիցիարի պահանջը, եթե՝

1) պահանջը կամ կից փաստաթղթերը չեն համապատասխանում սույն երաշխիքի պայմաններին.

2) պահանջը ներկայացվել է երաշխիքով սահմանված ժամկետի ավարտից հետո:

11. Երաշխիք տվող անձը պահանջը մերժելու մասին որոշում ընդունելու դեպքում անհապաղ, բայց ոչ ուշ, քան նույն աշխատանքային օրը, մերժման մասին տեղեկացնում է բենեֆիցիարին:

12. Սույն երաշխիքի նկատմամբ կիրառվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի համապատասխան դրույթները:

13. Սույն երաշխիքի կապակցությամբ ծագող վեճերը ենթակա են լուծման Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Գործադիր տնօրեն _____

Գլխավոր հաշվապահ _____

(ամիսը, ամսաթիվը, տարեթիվը)